داشت، اورا اکراه واجتناب میکردند. اکنون هرملتی باطوار و صنوف عبادت خود مشغول گشته و مساویاً زیر سایه خاقانی محی در شریعت یکی از دیگری فرق نمی بینند. مقدمتاً در اکثر ایالات ایران دزدان و سارقان بر سر راه نشسته کاروان و سیاحان میزدند و در تأدیب و تقدیم ایشان حکام تکاسل می کردند. اما امروز امنیت و اطمینان در عموم ممالک محروسه سلطان خواه در بلدان، خواه بر عرض جواد بدرجه کمال رسید. در باب ترتیب اساس حرب و تعلیم عساکر اطوار قدیمه بنظام جدید یعنی بقواعد فرنگستان مبدل گردید و قوانین مذکوره یوماً فیوماً بر خوی خلق تأثیر نموده سبب ترید راحت و اعتماد گشت.

و چون حضرت پادشاه جمجاه شاهزادگان و بیگلریگان و امرا و روساء ماموریتی و حکومتی عنایت فرماید، از ایشان حجت و عهدنامه میگیرد که حسب الموعود اطاعت بجای آورده امور و مصالح را بی تعصب اجرا کرده، مفاسد و مجارم را تعذیب نمایند. و حکام مشارالیه از ضابطان و کتخدایان و سائر عمال که در حفظ حکومت میدارند، حجات و تعهدات این معنی می طلبند که فسق و افترا بخود محروم و منع جور و جفا در عهد خویش ملزوم دانسته متکفل عمال وزیرستان شوند و اگر خلاف مراسم ذمت بکنند، مستوجب سیاست گردند.

اگر شاهنشاه معظم عنان دولت و قواعد عدالت بدین گونه مضبوط نگاه دارد، از طرف دیگر نواب و الا شاهزاده عباس میرزا که ولیعهد و نایب السلطنه نامزد است، در ولایات آذربایجان که حکومت آن حدود بدست آن والا با اختیار کلی داده اند، مجموع امور شرع و عرف را موافق قانون و خاطر خواهی و الدماجد بعمل آورده، روز بروز در تدبیر مصالح و ادراک علوم و فنون مترقی

می پذیرد.

الحال انتظام وقوانین سلطنت ایران بر این قرار است که رعایا ومالکان اموال واهالی مذاهب متفرقه در ظل حمایت خسروی سربست و آسوده گشته ، مرحمت پادشاهی در آفاق مشهور ومدکور افتاد واقوام آن اطراف بجهت دادآوری آن شهریار بیش از پیش مسدود وممنون میباشند وچون تصدیق این معانی لازم افتادیک دونقل که در این ایام وقوع یافت مرقوم کلك بیان خواهد شد.

در سنه ۱۲۲۹ هجری مطابق سال ۱۸۱۳ عیسوی خراسانیان بفرض استقلال عاصی شدند. این خبر بنفع شاه محمود سلطان افغانه رسید. خواست تا آن طغیانرا امداد دهد، که آتش فتنه در آن ولا خاموش نشود واولاد خود شاهزاده کامران باقشون لازمه بصوب خراسان فرستاد. خبر آن واقعه بر کاب همایون آمد و معروض امنای دولت گشته، شاه فرمود تا عسکر جمع کنند و اسماعیل خان طلایراسردار معین نموده ، بدفع طاغیان روانه کردند. چند روز گذشت که غفلتاً بدار السلطنه طهران خبر رسید که حاکم مازندران سلیمان خان قاجاریا غی شده اتفاق بخراسانیان کرده بود. شاه عساکر را کابی آراسته باستقبال دشمن بالذاة عزیمت فرمود و بعد از مقاتله ومحاربه چند ، درهرجامظفر شده ولایات خراسان وهرات تابنزدیک قندهار ضبط کرده، اهالی آن دیار باطاعت آورد.

سلیمان خان وخوانین خراسان وسائر طاغیان بگير آمده دست بسته وپای در زنجیر بحضور پادشاهی احضار کردند. شاه فرمود که در مواجهه رجال دولت شریعت آنها قطع داشته باشند و چون قصد نمود که اولاد دیوان سلیمان خان موافق قانون طی کنند ،

پرسید که بچه سیاستی مستحق است، ریش سفیدان در جواب گفتند که مستوجب قتل است. با وجود این حکم از راه مروت بر او شهنشاہ را رحمت آمد و از سر خون او گذشته فرمود که برای خبرت عالم بی چشم باشد و باقی طاغیانرا بخشیده و مرخص کرده باز بخدمت سلطانی قبول نمود.


در سنه ۱۲۳۰ مطابق سال ۱۸۱۵ عیسوی در نواحی دارالخلافه طهران از عدم باران خشکی عظیم اتفاق افتاد و شیخ الاسلام آن پایتخت اگر چه نزد پادشاه و ابناى دولت اعتبار و احترامش بسیار بود، لکن از خاطر خواهی خسروی غافل و بی خبر که جمله ساکنان ممالک محروسه مساویاً در ظل مرحمت شهر یاری محمی باشند. شیخ مشارالیه خود بخود تدبیری اندیشید که مقبول خدای تعالی و پسند طبع همایون آید و در خانه خود دو بیست نفر از خلق فقیر جمع آورده ایشانرا وعظ کرد و گفت که با مسلمین شبهه نیست که قطع باران و خشکی زمین غضب خداست و سبب چنین بلا، سوی در شرب شراب و در شیره خانهای آرامنه مجوئید. باید این خرابا ترا خراب کنیم تا قهر الهی ساکت و خاموش شود. پس برویم و خانهای ناپاک بخاک یکسان سازیم. با سخنهای فتنه انگیز دسته مردم ناهشیار و زودرنج بتحریر و تحریق آمده باقیل و قال هجوم بمحاله آرامنه بردند و بحکم شیخ مومی الیه کلیسا و شیرخانه چند خراب کردند. سریعاً خبر این شورش بسمع پادشاه رسید. غیظ کرد و فرمود تا شیخ الاسلام و سائر مفسدانرا گرفته بحضور بیاورند. چون شنیدند که شاه از فعل ایشان در غضب شده بود فرار کردند و در اطراف شهر مخفی شدند و شیخ الام بقصد رهائی جان بجامع شاه عبدالعظیم گریخت و امین نشست. آن جامع پناهگاهی است که از پایتخت يك فرسنگ و نیم دور میباشد و



مادام که در آنجا مجرمان وهم قتال می مانند کسی برایشان دست نمی تواند زد . بعد از جست و جوی بسیار دوازده نفر گرفتند و بحضور آوردند . پادشاه باخشم فرمود که با مفسدان بحکم که و بکدام شریعت شمارا جرات و جسارت آمد که چنین غلط کردید . مگر شیخ الاسلام شاه شما و مالک ممالک ایران است که با و اطاعت نمودید . چون خلاف قاعده دولت و عکس رای مبارک پادشاهی بخود مأذون و جائز دانسته اید ، سیاست موافق همان قواعد برای شما معمول خواهد شد . بیرون بروید . و حکم فرمود تا بمقتضای قانون بی تعویق سزارسانند و مبلغ ۱۰۰۰ تومان بجهت تضمین بارامنه ادا کنند و بعد روسا و معتبران نصارا بحضور طلبید و خاطر جمعی داده گفت مطلب شاه این است که اقوام مساکن ممالک سلطانی هر کدام مذهب دارند با کمال فراغبالی و آسودگی زیر سایه خسروی زندگی کنند ، باید شریعت شیخ - الاسلام را منظور نظر خاقانی و ملزم همت مادانسته طایفه آرامنه بخوشحالی و بدعا گوئی پادشاهی مشغول باشند . پس از اظهار این مراتب مرحمت شاه فرمود که نیز مبلغ ۳۰۰۰ تومان از خزینه خاص شهریاری بروساء مذکور تسلیم کنند تا مناسباً میان ستمدیدگان تقسیم و ایضاً قرارداد کرد که کلیسا را تعمیر و اشیاء و اسباب را تجدید یا ترمیم کرده مجموع این اخراجات محسوب دفاتر خزینه عامره داشته باشند .

مرقوم شد در دارالسلطنه پاریس در شهر رمضان المبارک ۱۲۳۱ ( ۱۸۱۵ - م . ) صاحب نشان شیر و خورشید ایران - ملک شاه نظرزاده میرداود ضاوردیان .

پایان



տանալով և նսււազելով, նա կարիքից և մտահոգութիւնից վտանգաւոր կերպով հիւանդացաւ, և միայն նրա մահուան նախորդ օրն էր, որ նրան յայտնեցին, թէ նա իր դատը շահել էր և թէ ոռւսական գանձարանից նրան տարեկան 3000 ռուբլի թողակ էին յատկացրել»։ 40)

Իր անձնական գործերով զբաղուած լինելով հանդերձ Միւր Գաւթիթն ազդեցիկ գործունէութիւն է ցուցաբերում ազգային խնդիրներում, 1829 թուին պարտքերի տակ խրուած էջմիածնի հաշուետեսութիւնը նրա վերահասութեանն է յանձնուում։ 41) 1830 թուի Մայիսի 14-ին Երևանի նահանգապետ Իշխան Վասիլ Բեհրուզեանի հետ նրան տեսնում ենք էջմիածնում, կուսակալ Կոմս Պասկևիչի ցանկութեամբ Կարնեցի Սերովբէ վարդապետ Արարատեանին եպիսկոպոս ձեռնադրելու խնդրի կապակցութեամբ։ Գաւթիթ խանին այս գործի մէջ առնելու պատճառն այն էր, որ նա «սիրելի էր թէ պատրիարքին և թէ միաբանաց»։ 42) Ինքը Սերովբէն իր ձեռնադրութիւնից յետոյ Պասկևիչին գրած նամակում գովասանքով է խօսում Գաւթիթ խանի ընձեռած օժանդակութեան մասին։ 43)

Վստահօրէն Գաւթիթ խանի այդ ժամանակաշրջանում ունեցած գործունէութեան վերաբերեալ աւելի կարևոր տեղեկութիւններ պիտի լինեն գանազան արխիւներում և մանաւանդ նրա կալուածատիրական օտուար գործում, որը մի քանի տարի առաջ Հայաստանի Մատենադարանը ձեռք բերեց մասնաւոր մի անձից։ Այդ գործը կազմել է հենց ինքը Գաւթիթ խանը «ԺԹ՝ դարի 50-ական թուականներին իր ժառանգական իրաւունքները հաստատելու համար»։ 44) Մենք վստահ ենք, որ այդ նիւթերի հրատարակումը ոչ միայն անհրաժեշտ լոյս կը սփռի Միւր Գաւթի և իր պայազատ տոմի գործունէութեան վրայ, այլև կարևոր ներդրում կը հանդիսանայ հայոց նորագոյն պատմութեան մի շարք հետաքրքրական խնդիրների համար։ Սիրում ենք յուսալ, որ այդ երախտաւոր աշխատանքը յօժարութեամբ կը կատարեն Հայաստանի մեր ձեռնհաս բանասէրները, իսկ մինչ այդ մենք խուսափում ենք այս ուսումնասիրութեան սահմաններն երկրորդական նիւթերով ընդարձակելուց։

Վերջացնելուց առաջ պիտի խոստովանենք, որ հակառակ մեր որոնումների, մեզ յաջողութեց ճշդել Միւր Գաւթի ծննդեան և մահուան թուականները, թէև իր գործունէութեան ժամանակաշրջանը մեզ իրաւունք է տալիս ենթադրելու, թէ նրա ծնունդը պիտի տեղի աւնեցած լինի 1770-ական թուականներին, իսկ մահը՝ 1850-ական թուականներին։ Թեհրանի Սուրբ Թադէոս Բարդուղիմէոս եկեղեցու քակում կայ մի համեմատաբար անշուք գերեզմանաքար, հետեւեալ արձանագրութեամբ․

Ա Ս Պ Ե Տ  
Մ Ե Լ Ի Ք Շ Ա Ը Ն Ա  
Չ Ա Ր Ե Ա Ն  
Հ Ա Ն Գ Ե Ա Ի  
1 8 5 3 Ա Պ Ր Ի Լ

միջև: Կ. Պալի ճանապարհն ընտրելու պատճառն այն էր, որ Աբբաս Միրզան ցանկանում էր ուղղակի բանակցել Պետերբուրգի հետ, իսկ Կովկասում նեոնեոդ ռուս իրխանաւորները Պարսից դեսպաններին թոյլ չէին տալիս Ռուսաստան անցնելու: 1826 թուի Հոկտեմբերի 7-ին Միր Գաւթին Աբբաս Միրզայի պատուէրով մի նամակ է գրում Աւստրիայի Իշխան Մետտերնիխին և նրանից խնդրում է, որ Պարսկաստանի դատը պաշտպանի: Միր Գաւթի այս շրջանի գործունէութեան վերաբերեալ մեծ թուով փաստաթղթերի պարսկերէն բնագրերը կամ թարգմանութիւնները տեղ են գտել ժամանակակից մի հաւաքածոյի մէջ, որից օգտուելով հանգուցեալ Սայիդ Նաֆիսին մի երկար շարք գետեղում է իր «Ժամանակակից Պարսկաստանի հատարական և քաղաքական պատմութիւն» անունով գրքի երկրորդ հատորում: 37) Այդ փաստաթղթերը հաւանաբար ժամանակին Աբբաս Միրզային են մատուցուում Միր Գաւթի կողմից, որպէս զեկուցում իր առաքելութեան: Ստամբուլում Միր Գաւթին ամիսներ շարունակ բանակցութիւններ է վարում տեղի ռուսաց դեսպանատան և Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան հետ՝ Պետերբուրգ անցնելու արտոնութիւն ստանալու համար, սակայն այդ բանակցութիւնները դրական արդիւնքի չեն յանգում և ողւս հիւպատոսը մերժում է նրան իր կողմից մուտքի անցադիր տալ: Վերջապէս, Գեկտեմբերին, ռուսաց կայսեր կողմից նրան պաշտօնապէս տեղեկացնում են, որ ոչ մի պայմանով չի կարող մուտք գործել Ռուսաստան և որ ապագայ ընթացք բանակցութիւնները պիտի վարել Վրաստանի փոխարքայի հետ: 37) Իրերի այս կացութեան մէջ Միր Գաւթիը ստիպւում է ձեռնառնայն Պարսկաստան վերադառնալ: 38)

Թուրքմէնչայի յայտնի պայմանագրով, կնքուած 1828 թուի Փետրուարի 10-ին, ամբողջ Անդրկովկասն անցնում է ռուսական տիրապետութեան տակ և ցարական կառավարութիւնը մերժում է ճանաչել մելիքների վաղեմի իրաւունքները: Մասնաւորապէս ծանր հարուած է հասնում Մելիք Շահնազարեաններին, որոնց կալուածների մի խոշոր մասը սեփականացնում է երեխայութիւնից նրանց պաշտպանութիւնը և քարերարութիւնը վայելած Իշխան Մադաթովը: 39) Ըստ երևոյթի Միր Գաւթին իր կեանքի մնացածն առաւելապէս նուիրում է իր տոհմի բռնագրաւուած իրաւունքները վերականգնելու գործին: Գեղաքքունեաց մելիքները նրան լիազօրում են ռուսական դատարաններում հետապնդելու իրենց դատը, վստահ լինելով, որ իր զիւանադիտական լայն փորձառութեամբ նա լաւազոյն մարդն էր այդ գործը յաջողութեամբ ի կատար ածելու համար: Հակառակ անմիտելի փաստերի և քաղաքի վաւերացումների, սակայն, այդ գոտն երկար տարիներ ձգձգուում է, պատճառ գտնելով ուժերի և միջոցների հսկայական վատնումների: Եթէ հաւատանք պրոֆ. Թումայեանին, «... նա ստիպուած եղաւ գաղտնի կերպով ծախելու իր կահ-կարասիքը և նոյնիսկ պատուոյ այն սուրը, որ նա ստացել էր Նապոլէոնից: Վերջապէս, չափազանց աղքատ

զին Գեորջու, որ ի վաղ ժամանակաց հետէ արքայական հրովարտակօքն Սէֆեանց, ի ձեռս իշխանութեան Մելիք-Շահնազարի Շափուրեանց և որդւոց նորա է լեալ, մեք ևս ի յայսմ ամի առ ի կարգաւորել զհին կանոնս և ուղղել զայն ամենայն կարգադրութեամբ և ըսլոր գործոցն անտի: յիշեալ բարձրատիճանի կառավարութեանն, որ է յորդոց Մելիք Շահնազարի, յանձնեմք, զի որպէս որ հարկն է և արժանն և բանականութեան նորա պատշաճի, ի կարգադրել զգթօս անտի և ինչ ի հասեցցուցանել զըսլոր ժողովուրդան, զգովանի ջանացողութիւն իւր ի գթօք դիցէ. զվճն պատահալս ի միջի նոցա, յատուկ քննութեամբ վերահասութիւն արարեալ, համեմատ օրինի և կանոնի վերջացուցէ և զմեղաւորսն պատժեցէ, զի մի որ վստահացի գործել զընդդէմսն իրաւանց, որ Աստուծով յիշեալ նահանգն ստացեալ զնորոգութիւն, ժողովուրդք ի հանգստութեան լեալ, աղօթեցին վասն տէրութեանս»: 33)

Հրովարտակի շարունակութեան մէջ Աբբաս Միրզան որոշում է Մելիք Շահնազարեաններին իշխանութեան սահմանները, ապա առանձնաշնորհումներից զրկում է «այնոքիկ որք ի յորդոցն Մելիք Շահնազարի փախուցեալ և ի տէրութենէ Պարսից յերեսս դարձուցեալ են»: Սակայն Միր Դաւիթը ջանք չի ինչայում նրանց գրութիւնն ևս պարզել, այնպէս որ Դաւիթը 1824 թուին նա գնում է Թիֆլիս և Կովկասի կառավարչապետ Չորովար Երմոլովից թոյլտուութիւն է խնդրում Ռուսաստան ապաստանած որոշ հայ մելիքների իրենց հայրենի Գեղարքունիքը վերադառնալու համար: 34)

Յաջորդ տարուայ զարնանը Միր Դաւիթն Թեհրանում հանդիպում է քրիստոնէացած հրեայ միսիոնար գթքտ. Ջոզէֆ Վոյֆֆը, որն ըստ ամենայնի բարձր է գնահատում հայ դիւանագետի մտաւոր կարողութիւնները, թէև նրան Պարսից արքունիքում տեսած լինելով, սխալմամբ մահմեդական է համարում:

«Դաւիթ խանը», — գրում է նայ — «մի անձնաւորութիւն էր քաջատեղեակ Քրիստոսի եկեղեցու պատմութեան և նրա հեղինակներին, ինչպէս օրինակ Եւսեբիոսին, Բարոնիոսին և Ֆրանսուայի Չլէորիին: Նա ծանօթ էր այս մարդկանց զրուածքներին, որն արգարև զարմանալի էր, և քաջատեղեակ՝ Քրիստոսի եկեղեցու մէջ մուտք գործած հերետիկոսութիւններին: Եւ թէև ինքն անձամբ մահմեդական էր, նա հետեւեալ չափազանց անակընկալ դիտողութիւնն արեց, թէ Մուսամմազը կարծես աշակերտն էր եղել Կերինթոսի և Արիոսի»: 35)

1826 թուի սեպտեմբերին Միր Դաւիթը նորից երևան է գալիս ղեկավարութեան պաշտօնով: Այս անգամ Աբբաս Միրզան փորձում է նրան Կ. Պոլսի ճանապարհով Պետերբուրգ ուղարկել, բուս-պարտկական սահմանային վճեքի կապակցութեամբ, ցարական կառավարութեան հետ բանակցութիւններ վարելու և Պարսկաստանի տեսակէտները պաշտպանելու համար, մի ժամանակ՝ երբ փաստօրէն պատերազմական վիճակ էր տիրում կողմերի

և Ֆրանսերէն լեզուներով հրատարակուած է մի փոքրիկ հատոր, որի հայերէն խորագիրն է. «Տեղեկութիւնք ի վերայ այժմեան վիճակին Պարսկաստանի, ի լեզու պարսիկ, հայ և զաղղիացի, ի Միր Տաւուտ Ծատուրէ, Լանկլեսէ և ի Ջրպետէ»: Ֆրանսերէն ենթախորագրի տակ նա իրեն ներկայացնում է որպէս «Chevalier des Ordres du Soleil et du Lion, envoyé en France en 1816»։<sup>31</sup>)

1822 թուի աշնանը Քաղիաղեանը նորից առիթ է ունենում Միր Դաւթին հանդիպելու, այս անգամ Հաղպատի Ս. Նշան վանքում, ուր առանձնացել էր Եփրեմ Կաթողիկոսը՝ հայրապետական աթոռից հրամարուելուց յետոյ:

«Ապա եկն անդանօր և մեծանուն Դաւիթ խան Ծատուրեան Դեսպան 'ի կողմանէ Պարսից 'ի Քաղղիա գնացեալ, և առ յապայն զիրաւունս տանուտիրական իշխանութեան իւրոյ 'ի վերայ Քեղարբունեաց հաստատեալ ի դիւանի կայսերութեան Ռուսաց, վասն շառաւիղ զոլոյն իւրոյ սերնդոց Սուլիանայ կինաւուրց Տեառն երկրին: Այս հոյակապ պայաջատ, 'ի սակս սակաւութեան սենեկաց՝ հիւր տուաւ զրազրատան տեղւոյն, յորում ենն քնակէի: Քաղցր և իշխանավայելուչ բարբ նորա, հանրածանօթ տեղեկութիւնք աշխարհաշուջ մտացն, և քուսումնարութեանն սովորոյթ, բազմօք բացին զմիտո իմ: 'ի մասնաւորի պատմեաց ինձ սա զվարս Ռոքինստնի Քրուզայ՝ զոր զեռ չէի տեսեալ. և յաւել 'ի նա զհրաշակերտս և զգովանիս 'ի գիտութեանց մեծի մայրաքաղաքին Պարիսայ, և զարուեստիցն դիւտս յեղուլ 'ի լսելիս իմ: Մանուկ անլուր այնպիսեաց՝ այնքան սաստիկ հարայ 'ի սէր երթալոյ անդր, և վտանգաց 'ի վտանգս անկանելոյ՝ մինչև աղերս 'ի վերայ աղերսանաց գրեալ մատուցի ամեներան հայրապետին Եփրեմայ, թողուլ զիս ազատ 'ի շուրջ աշխարհի»: (32)

Այս անգամ Քաղիաղեանին յաջողում է Էջմիածնից մեկնելու արտօնութիւն ստանալ, սակայն բախտը նրան առաջնորդում է ոչ թէ ղէպի Փարիզ, այլ ղէպի Կալկաթա:

1824 թուի Յունուար 9-ին (7 Ջամադի-օլ-սափալ, 1239 թ.) Միր Դաւիթն Աքքաս Միրզայից ստանում է մի հրովարտակ, որով մի անգամ ևս հաստատում են նրա տոհմի մելիքական դարաւոր իրաւունքները: Այդ հրովարտակի մէջ Աքքաս Միրզան մեծ զովասանքով է խօսում Միր Դաւթի կարողութիւնների մասին: Հետեւեալը թարգմանութիւնն է հրովարտակի առաջին մասի, որն ի ղէպ հետաքրքրական լոյս է սփռում մելիքական իրաւասութիւնների վրայ:

«Մեր բարձր հրաման եղև զի ըստ առատութեան խնամոց լուսաւորեալ սրտի մերոյ ի մասին բարձրաստիճան և գերադահ և հաւատարիմ ընտրելոյն ի մեծամեծս ազգին քրիստոնէից Դաւիթ խանին և վասն յայտնի լինելոյն արժանաւորութեան և բանագիտութեան նորին, լոյս խնամոց արեգակնափայլ սրտի մերոյ ծագեալ առ նա, ղկառավարութիւն նահան-

էր մէլիք Շահնազարս յազգէն Հայոց՝ և հաւատով քրիստոնեայ, իշխան հզօր և փառաւոր, որ արար հիւրընկալութիւն շահին որպէս վայելէ թագաւորի՝ և էր ինքն բարեկամ և մտերիմ և արգոյ առաջի թագաւորին: Վասն որոյ և թագաւորն պատուական և ազնիւ զգեստուք շքեղացուցեալ խիւսյեաց, և պարզեաց նմա գիշխանութիւն մէլիքութեան գաւառին, և այլ ևս դաստակերտս և գեղօրայս ետ նմա և եղբարց նորա: Եւ հաստատուն նոճոս գրեաց և կնքեաց թագաւորական կնքով և ետ նոցա զի անփոփոխ լիցի ժառանգութիւնն այն նոցա և գաւազաց նոցա յազգէ յազգ մինչև յաւիտեանս: 27)

Մէլիք Շահնազարս իր հերթին սերւում էր Գոփեան իշխանական տնից, որի սերունդն իր անունը վերցրել էր Զաքարէ Ամիրսպասալար և Իւսնէ Աթաբէկ իշխանների բոյր Գոփի անունից: Գոփը, Զաքարեան Սարգիս Իշխանի զուտորը, ամուսնանում է Ծարի հայազգի իշխան Հասանի հետ և իր անունը տալիս է այդ տոհմին, որի իշխանութիւնը 13-րդ դարում տարածւում էր Թարթառ գետի վերնազաւտոից բացի նաև Սիւնիքի Սողք գաւառի վրայ (Սևանայ լճից հարաւ-արևելք): 28)

Միր Դաւթի Փարիզ վերադառնալուց յետոյ մենք այլևս նրա մասին ուրիշ յիշատակութեան չենք հանդիպում մինչև 1816 թիւը: Եթէ ունեցել է նա որևէ ազգային կամ դիւանագիտական գործունէութիւն, այդ մասին բոլորովին լուռ են գէթ մեր ձեռքի տակ եղած աղբիւրները: Առանց մանրամասնութեան մէջ մտնելու չեղտենք, որ մենք հաւաստի չենք համարում Ռուզաթ-օս-Սաֆայի այն տեղեկութիւնը, ըստ որի Դաւիթ խանն ուղեկցում էր 1806 թուին Նապոլէոնի կողմից Թեհրան ժամանած պաշտօնական դեսպան Ամէղէ Ժուբերին: 29) Ժուբերի արկածային դեսպանութեան մէջ, սակայն, հայերն իրենց դերն են ունեցել: Որին թերևս անդրադառնանք մի այլ առիթով:

1816 թուին, սակայն, մենք Միր Դաւթին հանդիպում ենք Ս. Էջմիածնում, ղեկի Փարիզ իր ուղևորութեան ճանապարհին՝ որպէս պաշտօնական դեսպան պարսից պետութեան: Մեսրոփը Թաղիաղեանն իբրև ականատես այսպէս է գրում իր «Պատմութիւն Պարսից» աշխատութեան մէջ.

«Ն 1806, արքայն Պարսից դեսպան առաքեաց 'ի Պարիս, և շարունակեաց զայն ցամն 16 երբորդ. յորում մեծանուն իշխան Հայկազուն Դաւիթ Մէլիք Շահնազարեան, այր Գաղղիարէնագէտ և հմուտ իրողութեանց Եւրոպայ՝ առաքեցաւ 'ի դիմաց թագաւորին նոտիլ դեսպանութեամբ 'ի Պարիս: Որ զճանապարհայն եկեալ յէջմիածին, ունկն մատոյց հեղութեամբ միում 'ի ճառից իմոց՝ յատենի Հայրապետին Եփրեմայ. և խնդրեաց 'ի նմանէ արձակել զիս, զի տարցէ ընդ իւր 'ի Գաղղիա յուսմաւնս պէտպէս գիտութեանց աշակերտակցութեամբ Խաչատրոյ քեռորդուոյն իւրոյ: Այլ չեղև հնար»: 30)

1817 թուին, — ընկերակցութեամբ Յակոբ Շահան Զրպետեանի և Լուդովիկոս Մ. Լանզլէսի, — Միր Դաւիթը Փարիզում հայերէն, պարսկերէն

յ 3-դ ասուր փետրվարի 1861 ամի հիմնեցելոյ ի վերայ խնդրագործութեան բնակչի Շուշուայ դաւառի Ջրաբերդ դաւառակի Վերինշէն գեղջ Ասլան բէկի Ռուստամբէկեան Մէլիբ-Շահնազար-Շահֆօբեանց վասն այն թէ արդէն երեւի 'ի հաւաքեալ օրինաւոր եղանակաւ հաւաստութեանց՝ ազգապետ սերնդոց նորա է Մէլիբ Շահնազար Շահֆօբըն, յորմէ ծնեալ են Մէլիբ Եավրին և Եաւրի Աղայն, ի Մէլիբ Եավրինն ծնեալ է Մէլիբ Աստուածատուր, յորմէ ծնեալ են Միբ-Գաւիթ-խան և Բապայ բէկն, ի Եավրի աղայնն ծնեալ է Նազտի բէկն, յորմէ և ծնեալ է Միանսար բէկն, ի Բապայ բէկնն ծնեալ են Ռուստամ բէկն և Առուշան բէկն, ի Ռուստամ բէկնն ծնեալ են Ասլան-բէկն և Բէկլար բէկն, յԱսլան բէկնն ծնեալ են Միբգաջան բէկն և Բալայ բէկն և ի Բէկլար բէկնն ծնեալ են Բալասան բէկն և Սերկէյ բէկն: Ստուգութիւն որոյ վկայէ Լուսաւորչական Հայոց վիճակայի՛ն Կոնստանտնուպոլսոյ Նարաբադու ստորագրութեամբ և դրոշմամբ արբուսի կնքոյ, ի 19 Ապրիլի 1861 ամի 'ի Ք. Շուշի:

№ 871

Անդամ Կանսխտորիայի Տէր Իսրայէլով  
Քարտուղար Մէլիբ Շահնազարեանց» 25

Հաւանաբար վերի ճիւղազրուութիւնն անթերի չէ, քանի որ զբքի հեղինակը տողատակի ծանօթութեան մէջ յիշում է թէ Բէկլար-բէկից ծընւած են (բացի Բալասան և Սերկէյ բէկերից) Ջաւատ-բէկ, Նազար-բէկ և Առուստամ-բէկ, իսկ Ասլան-բէկից ծնուած են Պաւլի-բէկ և Ջիւմշիւտ-բէկ: Գրանով հանդերձ այդ վկայագիրը վաւերական լոյս է սփռում Միբ Գաւթի ծագման վրայ:

Վերոյիշեալ վաւերագրից յետոյ հեղինակն աւելցնում է. «Մի հաստ և հին թղթի վերայ վիճագրուած է Միբ-Գաւիթ-խանի պատկերն՝ Պարսից Շահիցն շնորհուած տիտղոսի ժապաւէնով և պարսկական աստղանիշ շքանշանով: Պատկերի տակ վիճագրուած է. «Միբ Գաւիթ խան Ծատուրեան ի տանէ Մէլիբ Շահնազարեանց Մազրայի. ասպէտ\*) առաջին աստիճանի կարգացն Արեգական առիւծոյ Պարսից Արքային, ևն. երբեմն դեսպան 'ի կողմանէ նոյն արքայէ առ թագաւոր Փռանցիու 1816 թուին»։ Տպուած է նաև նոյնի գաղղիերէն թարգմանածն»։ 26)

Յայտնի է հայոց պատմութիւնից, որ Մէլիբ Շահնազարեանների նախահայրն է եղել Մէլիբ Շահնազարը, որի մօտ Շահ Արքաան իջևանում է 1606 թուին: Այս առթիւ Առաքել Գաւրիթեցին գրում է.

«Ելեալ շահն ի Թիֆլիսու գնաց ի դաւառն Գեղամայ և բանակեցաւ անդէն բանակն արքունի. և ինքն Շահարաան իջևանեցաւ ի տան մէլիբ Շահնազարին, որ էր ի գիւղն Մազրայ, բնական ի նոյն գեղջէն: Եւ

\*) Սոյն ուսումնասիրութեան մէջ բերուած բոլոր վաւերագրերի ուղղագրութիւնը պահուած է նոյնութեամբ: Ջ. Հ.

առանց ազբիւր յիշելու, նրա ծննդավայրը նշանակում է Նոր-Ջուղան, Վճայրը յդի վիճակի մէջ գերի տարուած ըլլալուն համար»։ 21)

Այս տեղեկութիւնները վստահօրէն չեն համապատասխանում իրականութեան, քանի որ Միր Գաւթի ծննդեան ժամանակաշրջանում դէպի Ջուղա գերութեան հարց չկար։ 18-րդ դարում գերութեան դէպքեր եղել են 30-ական թուականներին՝ Նադեր Շահի կողմից դէպի Խորասան և դարավերջին՝ Աղա Մուսաձամազ խանի կողմից, Վրաստանը գրաւելուց յետոյ։

Զափազանց անվստահելի են նաև Ալլոյսաճեանի յաջորդ պարբերութեան առաջին մասերը։ «Գաւթի հայ և պարսիկ լեզուները Սպահանի մէջ կը սորվի և 14—15 տարեկանին, մօրը մահէն ետք, կ'երթայ Պաղտատ, ուր կը գորացնէ իր պարսկերէնը և կը սորվի արաբերէն և Պաղտատի մէջ կը վարէ Ֆրանսայի փոխ-հիւպատոսի և պարսիկ հիւպատոսի գործակատարի պաշտօնները։ Անկէ կ'անցնի Փարիզ, իր ուսումը կատարելագործելու, մանաւանդ ֆրանսերէնը հիմնովին ուսանելու համար։ Նաև կը ծանօթանայ Շահան Զրպետի հետ, որ Արևելեան Լեզուաց Վարժարանին մէջ Հայերէնի դասատուն էր»։ 22)

Պրոֆ. Թումայեանը քաւարարւում է միայն յիշելով, թէ պարսկերէն և արաբերէն լեզուները տիրապետելուց յետոյ Միր Գաւթիը գնացել էր Փարիզ՝ ֆրանսերէն սովորելու նպատակով։ Այդ ժամանակ Նապոլէոնը դիմում է Յակոբ Շահան Զրպետին, որը Փարիզի Կայսերական Ճեմարանում հայերէնի դասախօս էր, և խնդրում է, որ լեզուին և երկրին ծանօթ մի քանակնաց յանձնարարէր յատուկ մի առաջելութեամբ պարսից արքունիքն ուղարկուելու համար։ Զրպետն էլ յանձնարարում է Միր Գաւթին։ 23)

Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցն իր «Արցախ» անունով աշխատութեան մէջ, Գիւլիստան գաւառի Վերին-Շէն գիւղի մասին խօսելիս, մի առանձին քաժին է յատկացնում Մելիք Շահնազարեաններին։

«Գիւղումս բնակում է», գրում է նա, «Բէկլար-բէկ Մելիք-Շահնազարեանց Շահփուրեանցն, որի նախնիքն ևս Մեծ-Մազրա գիւղից փոխադրուած են Արցախ, նախ բնակութիւն հաստատած Աւետարանաց աւանում, ապա Շուշում, ապա Թիֆլիզում և հուսկ յետոյ գիւղումս։ Մելիք-Շահնազարեանների այս ճիւղի պատմութիւնն այնպա մնացած է զրականութեան, վասն որոյ գետեղում եմ հետեւել վաւերաթղթերը իբրև նիւթ ապագայ պատմութեան»։ 24)

Աղա կցում է երկու վկայականներ, որոնցից առաջինը (1860 թ. Մայիս 3) վերաբերում է Առուստամբէկ Բապայրէկեան Մելիք Շահնազարեանց Շահփուրեանցին, իսկ երկրորդը հետեւեալն է․

«Ըստ հրամանի Նորին Կայսերական մեծութեան ինքնակալին ամենայն Ռուսաց տուաւ այս ի Լուսաւորչական Հայոց կանխտարիէս Ղարաբաղու համաձայն օրագրական սահմանադրութեան Նորին կայացելոյ



խաղացումն Անդրկովկասում, Ֆաթհ-Ալի Շահին մղում են վերաքննելու իր արտաքին քաղաքականութիւնը և լրջօրէն իր ուշադրութիւնը դարձնելու Նապոլէոնի վրայ: Պարսկաստանը կարիք է զգում գինեւորական և տնտեսական օգնութեան, պատուար կանգնելու Ռուսաստանի ծառայման դէմ, իսկ Անգլիան իր օգնութեան համար նախ առաջարկում է չափազանց ծանր պայմաններ, ապա աւելի ուշ, 1805 թուին, Ռուսաստանի հետ դաշնակցելուց յետոյ գրեթէ ձեռնպահ դիրք է բռնում:

1804 թուի Սեպտեմբերին Ֆաթհ-Ալի Շահն Երևանում հանդիպում է ունենում Դաւիթ Դ. Կաթողիկոսի հետ և նրանից օգտակար տեղեկութիւններ է ստանում Նապոլէոնի մասին, որ նոյն տարուայ Մայիսին պաշտօնապէս կայսր էր յայտարարուել: 16)

Մինչ այդ, Փարիզից ստացուած հրահանգների համաձայն, Բաղդադի Ֆրանսական հիւպատոս Ժան Ֆրանսուա Ռոսսոն (Jean François Rousseau), որն ի ղեկ Միր Դաւթի առաքելութեան մէջ էլ որոշ դեր էր խաղացել, շփման մէջ է մտնում պարսից կառավարութեան հետ, նոր բանակցութիւնների ղուռ բանալու նպատակով: Համաձայն Լոնդոնի արտաքին գործոց նախարարութեան արխիւում պահուած մի նամակի, Միրզա Բողոբզը գրում է Բաղդադի անգլիական ներկայացուցիչ Սըր Հարֆորդ Ջոնսին (Sir Harford Jones), թէ «Ֆաթհ-Ալի Շահն Երևանի առաջին ճակատամարտի ընթացքում 1219 (1804) թուին Ֆրանսիայ կայսեր նամակները ստանում է երկու հալ վաճառականների միջոցով»: 17)

Այդ նամակների մէջ Ֆրանսական կառավարութիւնն ակնարկներ է անում զոյգ երկրների միջև բարեկամական կապերը վերականգնելու խնդրին և Նապոլէոնն առաջարկում է երկու կողմից միասնաբար յարձակում գործել Ռուսաստանի վրայ: 18)

Ի պատասխան այդ գրութիւնների, թէ անկախ դրանցից, Ֆաթհ-Ալի Շահը Թուրքիայի Ֆրանսական զեսպան Մարշալ Բրունի (Maréchal Brune) միջոցով Նապոլէոնին մի նամակ է գրում և Կ. Պոլիս է ուղարկում մի հայ բանագնացի ձեռքով, որը մեզ յայտնի է Ossèph Vassilovitz անունով 19), և որն ըստ Ամէզէ Ժուրբերի՝ իրեն ներկայացնում է որպէս մի վաճառական: 20)

Այդ նամակը, Թարգմանութեան հետ միասին, 1805 թուի Յունւարին հասնում է Նապոլէոնին և սկիզբ է դնում Ֆրանս-պարսկական փոխադարձ յարաբերութեանց մի բեղուն շրջանի, որի պատմութիւնը հետաքրքրական լինելով հանդերձ, զուրս է սոյն ուսումնասիրութեան սահմաններից:

Ո՞վ էր, սակայն, Միր Դաւիթ Մէլիք Շահնազարեանն և ի՞նչ պայմաններում նրան վիճակուեց նախակարապետը հանդիսանալ Ֆրանս-իրանական արդի դիւանագիտութեան:

Հայ բանագիրութեան աջնաջան վաստակաւոր Արշակ Ալպոյաճեանը,

ներից մէկում: 11) Հետագայ տողատակի ծանօթութեան մէջ աւելի մանրամասնօրէն անդրադառնալով այդ առաջարկներին, Ռոբինսոնը գրում է. «Այս նամակները մատուցւում են Շահրոսի անունով մէկի կողմից (այստեղ Շահրոսի անունը վստահօրէն Միր Գաւթի տոհմի մի այլ կոչման՝ Շահիբօբի աղաւաղումն է. Զ. Ը.): որը Փարիզ էր ճամբորդել իր անձնական գործերով և այնտեղ մեծ ուշադրութեան էր արժանացել Ֆրանսական պաշտօնական շրջանակներում: Սկզբում ընդհանուր կարծիքն այն էր, որ նրանք հարազատ գրութիւններ էին. սակայն յետոյ այնպիսի պարագաներ ի յայտ եկան, որոնք տեղի տուեցին կասկածի, թէ նրանք բղիւսւմ էին դիւանագիտական ստորագոս պաշտօնեաների մի խմբակի կողմից, որոնք «Հիւպատոսական գործակալներ» անուան տակ մնացել էին Սիւրբալայում, — այդ երկրի Ֆրանսական ուժերի պարզումից յետոյ, — և որոնք երկար տարիներ շարունակեցին հետապնդել թաղաքական արկածախնդրութեան անհանդիստ մի ուղի, հետագայում սաղորանքների մի կատարեալ ցանց տարածելով ամբողջ Արևմտեան Ասիայի վրայ»: 12)

Այս բոլոր վկայութիւնները բնաւ կասկած չեն թողնում, թէ Միր Գաւթի առաքելութիւնն առ նուազն կիսապաշտօնական բնոյթ էր կրում և նոյնիսկ եթէ դեռպահանջան լիազօրութիւններ չուներ, սկզբնական մի փորձ էր նախադուռը բանալու Ֆրանս-իրանական աւելի լուրջ բանակցութիւնների առջև: Եթէ Միր Գաւթին աւելի մեծ յաջողութիւն չուներ, պատճառն այն չէր, անշուշտ, որ Պարսկաստանում նրա բերած թղթերը կարդացող չկար, այլ այն, որ պարսից կառավարութիւնը հէնց նոր մի դաշինք էր կնքել Նիդհաստանի կառավարութեան ներկայացուցիչ Կապիտան (յետոյ պարսից երկատոր պատմութեան յայտնի հեղինակ, Սըր Ջոն) Մալքեմի հետ և իր թաղաքական յոյսերը կապել էր Մեծն Բրիտանիային: Յիշուի, Աբբաս Միրզայի նախարար Միրզա Բոզորգը կտրականօրէն յայտարարում է, որ «Եթէ Բոնապարտն էլ անձամբ Խեհրան գայ, նրան թոյլ չի տրուի Տիեզերքի Կենտրոնի (Ղեբլա Ալամ) տեսութեան արժանանալու» 13): Այս կապակցութեամբ հետաքրքիր է նկատել, որ իր անունով յայտնի դարձած զաշնագիրը ստորագրելուց յետոյ (Յունուար, 1801), Կապիտան Մալքեմը համոզում է Ֆարս-Ալի Շահին մի ֆարման հրապարակել, որով նահանգապետներին խստիւ հրահանգւում էր ոչ մի պայմանով թոյլ չտալ Ֆրանսացիներին իրենց իրաւասութեան ենթակայ սահմաններն օտք կոխել, աւելացնելով թէ «Գուրջ բոլորովին ազատ էք և հրաման ունէք նրանց անարգելու և սպանելու» 14): Այս փաստերի դիմաց զարմանալի է, որ որոշ հեղինակութիւններ, — ինչպէս Ալի Աբբաս Բիհան իր «Իրանի թաղաքական և դիւանագիտական պատմութիւն» գրքի մէջ 15), — Գաւթի խանի առաքելութեան ձախողման բուն պատճառներն անտեսելով, դեռ կրկնում են Թեհրանում Ֆրանսագէտ չիլինելու անհիմն ու անհեթեթ վարկածը:

Ինչևիցէ, հետագայ դէպքերը, մասնաւորապէս Ռուսաստանի առաջ-

բանի որ այդ ժամանակ մէկը չկար, որ կարողանար այդ գրութիւնը կարգալ և նամակի պարունակութիւնը հասկանալ, հարկադրաբար ծրարը չբացած վերադարձնում են նամակաբերին և նրան յետ են ուղարկում (իր երկիրը)»<sup>7</sup>):

Նոյն հեղինակը մի քանի տարի յետոյ, 1883 թուին, իր «Մանթակէմ նասէրի» գրքում, հաւանաբար Ռուզաթ-օու-Սաֆային հետևելով, բնութարարի այլ կերպ է մեկնաբանում դէպքերը. «Այս տարուայ մէջ (1217) Բաղդադի հայ վաճառականներից Սօջա Դաւիթ անունով մէկի միջոցով Յըրանսիայի Առաջին Հիւպատոս Նապոլէոն Բոնապարտի կողմից մի նամակ է հասնում Նորին Վեհափառութեան: Սօջա Դաւիթը խանութեան տիրոջ աստուայով ուղևորում է Ֆրանսիա, իր հետ տանելով այդ նամակի պատասխանը»<sup>8</sup>):

Անգլիական աղբիւրներից Ռոբերտ Գրանտ Վատսոնի իր Ղաջարների նուիրութեամբ հանրածանօթ պատմութեան մէջ (1866) հեղինակն շեշտով է յիշատակում Միր Դաւթի առաքելութիւնը. «Մենք տեղեկանում ենք թէ Հիջրէթի 1216 (Փրկչական 1801) թուին մի հայ վաճառական, որ Բաղդադից Թեհրան էր եկել, յայտարարում է թէ հաւատարմազբեր է կրում Նապոլէոն կայսեր կառավարութեան կողմից: Բայց Թեհրանում ոչ ոք չի կարողանում վերծանել Ֆրանսերէն գրերը, որոնցով շարադրւած էին նրա նամակները, ուստի այդ ինքնակոչ ղեսպանը ստիպւում է համակերպուել այն անտարբերութեան, որից իր արտաքին տեսքն և իր շքախումբը բաւարար չէին իրեն ազատելու»<sup>9</sup>):

Անգլիացի մի այլ հեղինակ, Բեհիստունի բնեռագիր արձանագրութեան վերծանող և Թեհրանի երբեմնի բրիտանական ղեսպան Սըր Հենրի Ռալֆսոնը, որը 19-րդ դարի պարսկական քաղաքական կեանքը յատուկ ուսումնասիրութեան առարկայ էր դարձրել, իր «Անգլիան և Ռուսաստանն Արևելքում» աշխատութեան մէջ (1875 թ.) հետաքրքիր մանրամասնութիւններ է տալիս ֆրանս-իրանական յարաբերութեանց նախնական փորձերի կապակցութեամբ. «Պարսկաստանը... յաջորդաբար անխնջ ծիցիանովին կորցրեց Մինգրելիան և Գանձակը, Շաբին, Շիրուանն և Ղարաբաղը: 1804 թուին նա կռուեց իր առաջին հաստատուն ճակատամարտում ուսուական զօրքերի դէմ՝ Նրեանի մօտ և, անշուշտ, պարտութիւն կրեց: Երբ 1802 թուին Ֆրանսիայի կողմից նախնական բանակցութիւններ սկսուեցին Վրաստանում, Ռուսաստանի դէմ ֆրանսական և պարսկական մի բանակի համագործակցութեան առաջարկով (բնութարարի նուաճումները դաշնագիր պետութիւնների մէջ հաւաստարպէս բաժանելու և անմիջապէս Թեհրանում և Նրեանում միայուն ներկայացուցիչներ հաստատելու պայմանով), նրանք պաղ ընդունելութիւն գտան»<sup>10</sup>):

Վերին տողերն իրականութեան մէջ գրուել էին 1840 թուին և ապուել Կալկաթայում հրատարակուող մի հանդէսի նոյն տարուայ համար-

զաթ-օս-Սաֆա զրբի Ղաջարներին նուիրուած յաւելուածական մասում զը-  
լում է՝ <1208 (1795) թուին երբ նահատակ արքան՝ Մուհամմադ խան  
Ղաջար Ղաչին Թիֆլիս քաղաքը նուածեց և շարդ ու կողոպուտ կատարեց3),  
Ֆրանսիայի թագաւոր Նապոլէոնն (այդ ղէպքերի մասին) տեղեկանալով՝  
Ռուսաստանի կառավարութեան ղէմ թշնամութիւնից և տեղութիւնից  
դրողուած, ցանկացաւ նահատակ կայսեր հետ բարեկամութիւն ու միառնա-  
կանութիւն ստեղծել: Նա Սաֆաւեան արքաների կողմից Ֆրանսիայի կա-  
ռավարութեան հետ կնքուած դաշնագրերն իր բանագնացի հետ Պարսկաստան  
ուղարկեց, սակայն վերջինս այն ժամանակ տեղ հասաւ, երբ այն թագա-  
ւորը Շուշուայ բերդում նահատակութեան շնորհին էր արժանացել և ինք-  
նակալ կայսր Ֆաթի-Ալի Շահ Ղաջարը դեռևս զահ բարձրացած չլինելով,  
երկիրը խռով ու խռոնակ վիճակում էր: Ղաջի Իրրահիմ խանը (ժամանակ-  
ի էթէմադ-էդ-Գովլէն կամ նախարարապետը՝ Զ. Լ.) նրան մի անորոշ  
պատասխան տուեց և ճանապարհ դրեց4): Քարբալայի կոտորածի և Վահա-  
բիների ապստամբութեան տարում էլ, որ 1216-ին էր, Իսմայիլ բէգ Ղօ-  
լամը նամակ էր տարել Բաղդադ, երբ տեղի վաճառականներից մէկը, Խօջա  
Գաւիթ անունով, նրան հանդիպելով, պնդում է, թէ ինքը Ֆրանսիայի  
կառավարութեան կողմից Պարսկաստան ուղարկուած բանագնաց է և յետոյ  
էլ Իսմայիլ բէգ Բայաթի հետ գալիս է Թեհրան: Բայց քանի որ Ֆրանսե-  
րէն կարգաւ ղեռ Պարսկաստանում սովորութիւն չէր դարձել, նրա զբու-  
թիւնների հանգոյցը չշուծուեց և նրա առաքելութեան հանդէպ կասկածան-  
քով վերաբերուեցին: Այնպէս որ դարձեալ մի անորոշ պատասխան գրեցին  
և Գաւիթն էլ խանութեան ախղոս շնորհելով յետ ուղարկեցին5):

Քարբալայի ղէպքերը, որոնք իրենց որոտմովիկ մանրամասնու-  
թեամբ նկարագրուած են պարսկական աղբիւրներում, տեղի ունեցած 1216  
թուի էյդէ Ղադիրի օրը (Գոյ Կէջլա ամսի 18-ին) 6), որը համապատաս-  
խանում է Փրկչական 1802 թուի Ապրիլի 21-ին՝ Վաւաւօրէն Միր Գաւթի  
Թեհրան ժամանումը պիտի տեղի ունեցած լինի նայն տարուայ երկրորդ  
կիսին:

Մի ուրիշ պարսիկ նշիկնակ՝ Միրզա Մուհամմադ Հասան խան Սա-  
նիյ-էդ-Գովլէն, աւելի հանրածանօթ իր հետագայ էթէմադ-էն-Սալթանէ  
տիտղոսով, իր Մէրաթ-օլ-Բուլղանէ Նասէրի տեղադրական երկատիրութեան  
մէջ, հրատարակուած 1204 (1877) թուին, 1217 թուի ղէպքերի տակ  
թերևս Նասէր-օթ-Քավարիխին հետևելով, այսպէս է նկարագրում Միր  
Գաւթի առաքելութիւնը: <Այս տարուայ մէջ Իսմայիլ բէգ Բայաթ Ղօլամը,  
որ Վահաբիների կողմից կատարուած շարդի ջնջութեան համար Բաղդադ  
էր գնացել, տեղի վաճառականներից մէկի հետ Բաղդադում տեսակցութիւն  
է աւենեում: Նա պնդում է, թէ ինքը Ֆրանսիայի կառավարութեան կող-  
մից բանագնաց է ուղարկուել Պարսկաստան և Իսմայիլ բէգի հետ Թեհրան  
է գալիս: Նա մի նամակ ունէր Ֆրանսերէն լեզուով և զբուրեամբ, բայց

մէջ, տեղ են գտել մի շարք բացայայտ անճշդութիւններ, որոնք կարօտ են փաստացի ուղղումներին:

Ներկայ յօդուածը մի փորձ է մեր հնարաւորութեան սահմաններում ի մի հաւաքելու նրա մասին ցրուած նիւթերից ամէնից կարեւորները, նոր ուսումնասիրութիւնների խթան հանդիսանալու նպատակով: Մասնաւոր ուշադրութիւն ենք դարձրել պարտական աղբիւրների վրայ, որոնք ցարդ չեն օգտագործուել հայ բնասիրութեան կողմից:

Միւր Դաւիթն առաջին անգամ երևում է Թեհրանում, Հիջրէթի 1217 (Փրկչական 1802) թուականին: Նրա ժամանման մասին մինչև հի-



ՄԻՐ ԴԱՎԻԹ ԵԱՀՆԱԶԱՐԵԱՆ

մա ժամանակակից աչ մի յիշատակութեան չենք հանդիպել, սակայն պարսից Ղաջարների հարստութեան պատմութեանը նուիրուած գլխաւոր աղբիւրները, որոնք մեծ մասամբ ժամանակագրական բնոյթ ունեն, անդրադառնում են այդ առաքելութեանը:

Միւրգա Մուհամմադ Թագի Լեսան-օլ-Մօլթ Սէփէրն իր Նասնի-օր-Փավարիխ կոչուած ընդարձակ պատմութեան Ղաջարներին վերաբերող մասի առաջին հատորում, հրատարակուած Հիջրէթի 1274 (1857—58) թուին, այսպէս է գրում. «Քարբալայի բնակիչների կոտորածից յետոյ, ինչպէս արդէն յիշուել է, Իսմայիլ բէգ Բայաթը կարգուում է Բազդադի ղեսպան: Այդ ժամանակ հայ վահառականներից մէկը, Դաւիթ ա-

նունով, որ Ֆրանսիայի կետ աւերտով էր զբաղուած, նրա մօտ է գնում և նրան մի քանի ֆրանսերէն գրութիւններ ցոյց տալով՝ իրեն ներկայացնում է որպէս այդ պետութեան ղեսպան և Իսմայիլ բէգի ուղեկցութեամբ գալիս է Թեհրան: (Սակայն) Պարսից պետական շրջանակները նրա խօսքերին վստահութիւն չեն ընծայում և նրա գրերն էլ կեզծիք են համարում (Ֆեքա'բէ ու րա' բէ ֆեյբ փանգաւ'սանգ):»<sup>2</sup>)

Լեսան-օլ-Մօլթի ժամանակակից Ռէզա Ղուլի խան Հէգայեաթը Ռու-

# ՄԻՐ ԴԱԻԹ ՄԵԼԻՔ ԾԱՅՆԱԶԱՐԵԱՆ

(ԱՐՏԱՏՊՈՒԱԾ «ՐԱՅՖԻ» 1969 թ. ՏԱՐԵԳՐՔԻՑ)

Գրեց՝ ԶԱՆԻ Գ. ԼԱՆԱՆԵԱՆ

Տասնևիններորդ դարի առաջին կիսին, պատերազմական զանազան զործողութիւններին զուգընթաց, Պարսկաստանը դարձաւ դիւանագիտական մի ընդարձակ մրցադաշտ, ուր ժամանակի մեծ պետութիւնները՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, ասպարէզ իջան քաղաքական, տնտեսական և ազգամովարական գերակայութիւն ձեռք բերելու նպատակով: Յիրաւի, դարազրկին Պարսկաստանն ինքն իր հերթին դաշնակիցներ էր որոնում կառեցնելու համար այն վտանգը, որ սպառնում էր իրեն «չ-սիսից» Ռուսաստանի ծաւալողական քաղաքականութեան հետևանքով: Իրերի այս կացութեան մէջ Թեհրան է հասնում Գեղարքունեաց Մելիք Շահնազարեանների տոմից Միր Դաւիթ Մասուրեանը, որպէս Ֆրանսիայի Առաջին Հիւպատոս Եւպոլէանի պաշտօնական բանազնաց, Ֆրանս-իրանական մերձեցման համար յարմար հող պատրաստելու յատուկ առաքելութեամբ:

Միր Դաւիթ Մելիք Շահնազարեանը մէկն էր հայազգի այն բանազնացներից և դեսպաններից, որոնք վաղ ժամանակներից սկսած մինչև գրեթէ մեր օրերը, նշանակալից դեր են խաղացել պարսից դիւանագիտութեան մէջ, թէ՛ քաղաքական ե՛ւ թէ՛ տնտեսական ասպարէզներում:

Դժբխտաբար, Միր Դաւթի կեանքը շատ քիչ է ուսումնասիրուել և նրա զործուներթեան վերաբերեալ տեղեկութիւնները մեծ մասամբ ցրուած են զանազան կիս հրատարակութիւններում, կամ թէ դեռևս մնում են թաղուած դիւանագիտական արխիւներում: Բացառապէս նրան նուիրուած մեզ ծանօթ միակ աշխատութիւնը համեմատաբար մի կարճ յօդուած է պրոֆ. Կարապետ Թումայեանի ստորագրութեամբ, տպագրուած Լոնդոնում անգլերէն լեզուով հրատարակուող «Արարատ» ամսագրի 1917 թուի Մայիսի համարում՝ «Մի հալ դիւանագէտ Եւպոլէանի ծառայութեան մէջ հարիւր տարի առաջ» խորագրով: Սակայն, նայնիսկ այդ կարճ յօդուածի

تقدیم :

## به دو ملت برادر ایران وارمن

غوکاس کاراپتیان - مکناس<sup>۱</sup>

۱ - مکناس EAESMKN نام نجیب‌زاده‌ای است که در روم باستان  
میزبست و سه ادب و دانش عشق می‌ورزید . او ثروت بیکران خود را  
دوراه اشاعه علم و ادب بکار می‌برده و از ادبا و دانشمندان حمایت می‌کرد .  
شهرت مکناس پس از مرگش تابداً نجا رسید که هر کس در چنین راهی گام  
می‌نهاد ، وی را مکناس می‌خواندند و بزرگش می‌داشتند .  
غوکاس کاراپتیان نیز با چنین انگیزه‌ای به چاپ و نشر کتب ادبی و  
تاریخی دست زده است و هیچ‌گونه چشم‌داشت انتقامی از اینکار ندارد

# Մ Ի Ր Դ Ա Ի Ի Թ ՄԵԼԻԻՔ ԾԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ՀԱՅ ԴԻԻԱՆԱԳԷՏ ՆԱԳՈՒԼՈՆԻ ԵՒ ՖԱԹՀ-ԱՒ ԾԱՀԻ  
ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Զ. Գ. ՀԱՆԱՆՆԱՎ

